ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՇՀԱՊՁԲ-7/15-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30-ը հունվարի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Կապիտալ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.02.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/15-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 117 010 000 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն տաս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ ք.Երևան,Միրաքյան 23, շին 8 «Արմսվիսբանկ» ՓԲԸ Հ/Հ 250 001 021 337 0100 ՀՎՀՀ 01246073 տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2017թ. ըստ ամիսների					
						Ապրիլ	Մայիս	Հունիս	Օգոստոս	Հոկտեմբեր	Նոյեմբեր
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	հավաքածու	3 270	27 000	88 290 000	4 500	4 500	4 500	4 500	4 500	4 500
2	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	հավաքածու	3 590	8 000	28 720 000	1 250	1 250	1 250	1 250	1 500	1 500
Ընդհանուր գումարը՝					117 010 000 /մեկ հարյուր տասնյոթ միլիոն տաս հազար/ ՀՀ դրամ						

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական պարենային բազա:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատանքների գործառնական վարչություն
Հ/Հ 90001144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ԼՏԵ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրաքյան 23, շին 8
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 250 001 021 337 0100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ									
		CPV-ի կոդը	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	15897100/1/4/4	14715000	29430000	29430000	44145000	58860000	58860000	73575000	88290000	88290000
2	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	15897100/2/4/4	4487500	8975000	8975000	13462500	17950000	17950000	23335000	28720000	28720000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ածողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎ 90001144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ԼՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրաքյան 23, շին 8
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 250 001 021 337 0100
ՀՎՀՀ 01246073

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ԵՀԱՊՁԲ-7/15-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 24-ը հոկտեմբերի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Վ. Հովհաննիսյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Կապիտալ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.02.2016թ. կնքված № ԵՀԱՊՁԲ-7/15-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 16 350 000 (տասնվեց միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 90001114079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ ք.Երևան,Միրաքյան 23, շին 8 «Արմսվիսբանկ» ՓԲԸ հ/հ 250 001 021 337 0100 ՀՎՀՀ 01246073 տնօրեն Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2016թ. ըստ եռամսյակների
						4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	հավաքածու	3 270	5 000	16 350 000	5 000
Ընդհանուր գումարը՝ 16 350 000 (տասնվեց միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ						

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ		
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	15897100/1/4/4	16350000	16350000	16350000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ ռնպատրաստմանի պետ Ռ.ԺԿ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրաքյան 23, շին 8
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 250 001 021 337 0100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԱՊՁԲ-7/15-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 26 -ը փետրվարի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Կապիտալ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.02.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/15-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 117 010 000 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն տաս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00887415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ ք.Երևան,Միրաքյան 23, շին 8 «Արմսվիսբանկ» ՓԲԸ Հ/Հ 250 001 021 337 0100 ՀՎՀՀ 01246073 տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2016թ. ըստ եռամսյակների
						4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2016թ.
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	հավաքածու	3 270	27 000	88 290 000	27 000
2	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	հավաքածու	3 590	8 000	28 720 000	8 000
Ընդհանուր գումարը՝ 117 010 000 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն տաս հազար) ՀՀ դրամ						

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ		
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	15897100/1/4/4	88290000	88290000	88290000
2	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	15897100/2/4/4	28720000	28720000	28720000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրաքյան 23, շին 8
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 250 001 021 337 0100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/15-1

ք. Երևան 18 -ը փետրվարի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Կապիտալ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված չոր օրապահիկ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

1.2 Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում Վաճառողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Վաճառողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում՝ ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանի լուծվում է: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում նշված ապրանքատեսակի մասով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը այդ մասով կլուծարվի:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.8 Ստանալ Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև

հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 351 030 000 (երեք հարյուր հիսունմեկ միլիոն երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 30-ը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի

արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.12 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչություն:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ ք.Երևան,Միրաքյան 23, շին 8 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 1930041239830100 ՀՎՀՀ 01246073 տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

դաշտային օրապարեն /Համագորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//

Հավաքածույի պարունակությունը՝

չոր թխվածքաբիթ (գալետ)՝ յուրաքանչյուր հավաքածույի մեջ 4 հատ 50 գր ոց պոլիէթիլենային հերմետիկ փաթեթավորմամբ, յուրաքանչյուր փաթեթի վրա <<Չոր թխվածքաբլիթ (գալետ) բանակային. 50 գր. Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով.

Մսի պահածո 1 ին տեսակի (կտորներով)՝ պատրաստված 1 անգամից ոչ ավել սառեցված ԽԵԿ (կով, երինջ, գոմեշ) մսով և կենդանական ճարպով (բացառությամբ կենդանու փորի ճարպի), ճարպի և շարակցական հյուսվածքների պարունակությունը 14% ից ոչ ավել. առանց խոշոր արյունատար անոթների և լիմֆատիկ հանգույցների: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54% ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավել 17% ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%, պատրաստի մսի ընդհանուր քանակը ոչ պակաս 134 գրամ, մսի մեկ կտորի զանգվածը ոչ պակաս 30 գրամից, թույլատրվում է 30 գրամից պակաս կտորների քանակը ոչ ավել 15% մսի ընդհանուր քանակից: Արգելվում է սննդային հավելման օգտագործումը: 300գր ոց մետաղյա տուփերով: Պիտակի վրա պետք է նշված լինի սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ ցուցանիշները (ճարպ, սպիտակուց, կալորիականություն): Մատակարարի կողմից յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է ներկայացվի մսի տեսակը հիմնավորող փաստաթուղթ: Տուփերի պիտակների ֆոնը՝ զինվորական դաշտային համազգեստի երանգով: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 36 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ <<Կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560 և որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

մսաբուսական պահածո տարբեր՝ յուրաքանչյուր հավաքածույի մեջ 2 հատ 250 գր-ոց թիթեղյա փաթեթավորմամբ տուփերով, որից մեկը հնդկաձավարով շիլա հատիկավոր՝ մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված), տեխնիկական պայմանների համաձայն, պատրաստված 1 անգամից ոչ ավել սառեցված ԽԵԿ (կով, երինջ, գոմեշ) մանր կտրատված մսից (արգելվում է աղացած մսի օգտագործումը), ճարպի և շարակցական հյուսվածքների պարունակությունը 14%-ից ոչ ավել. առանց խոշոր արյունատար անոթների և լիմֆատիկ հանգույցների. պատրաստված արևածաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: Չոր նյութերը ոչ պակաս 40%, ընդհանուր սպիտակուցները 10%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 6%-ից ոչ պակաս, պատրաստի մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 47 գրամ, պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15% ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ. յուղի զանգվածային մասը 10%-ից 12%, քլորիդների զանգվածային մասը 1,2-ից 1,5%, մսի քանակը համաձայն ԳՈՍՏ 8286-90-ի: երկրորդ տեսակը՝ կանաչ ոլոռով հատիկավոր՝ 2-րդ կարգի խոզի մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված) և տոմատի սոուսով, տեխնիկական պայմանների համաձայն, պատրաստված 1 անգամից ոչ ավել սառեցված խոզի մանր կտրատված մսից (արգելվում է աղացած մսի օգտագործումը), պատրաստված արևածաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: Չոր նյութերը ոչ պակաս 32%, ընդհանուր սպիտակուցները 5,5%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 4,5%-ից ոչ պակաս. մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 47 գրամ, պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15%-ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ. յուղի զանգվածային մասը 8% ից 10%, քլորիդների զանգվածային մասը 1,2-ից 1,5%. մսի քանակը համաձայն ԳՈՍՏ 8286-90 ի:

Մատակարարի կողմից յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է ներկայացվի մսի տեսակը հիմնավորող փաստաթուղթ: Պահպանման ժամկետը ոչ պակաս քան 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեսի երանգով: Պիտակի վրա պետք է լինի <<Օգտագործելուց առաջ տաքացնել>>, բաղադրությունը՝ միս, ձավարեղեն, յուղ (նշելով ձավարեղենի և յուղի տեսակը), աղ, սոխ, գազար, տոմատ, պղպեղ, նաև նշելով ցուցանիշներ սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ (յուղ, սպիտակուց, կալորիականություն): Յուրաքանչյուր արկղի մեջ 1 բացիչ:

շաքարավազ՝ ԳՈՍՏ 21 94, յուրաքանչյուր հավաքածույի մեջ 3 հատ 30 գր-ոց անհատական փաթեթավորված սննդային պոլիմերային թաղանթով. յուրաքանչյուր փաթեթի վրա <<Շաքարավազ, 30գրամ, Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով, փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով.

թեյ՝ 1 ին տեսակի, ԳՈՍՏ 1937-90 յուրաքանչյուր հավաքածույի մեջ 2 հատ 1,5 գր. տարողությամբ՝ մեկանգամյա օգտագործման, մեկանգամյա օգտագործման թեյը փաթեթավորված սննդային պոլիմերային թաղանթով, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%,

- սև աղացած պղպեղ՝ԳՈՍՏ 29050-91, 1 գր տարողությամբ սննդային թղթյա անհատական փաթեթավորման. յուրաքանչյուր փաթեթի վրա <<Սև պղպեղ, 1 գրամ, Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով. փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով. պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%,

կերակրի աղ՝ ՀՍՏ 239-2005, 5 գր տարողությամբ սննդային թղթյա անհատական փաթեթավորման, յուրաքանչյուր փաթեթի վրա <<Կերակրի աղ, 5 գրամ, Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով, փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով:Պահպանման ժամկետը ոչ պակաս քան 24 ամիս.

չոր սպիրտ՝ մեկ ստվարաթղթե տուփի մեջ 3 հատիկ, պոլիէթիլենային փաթեթավորման.

3 հատ մեկանգամյա օգտագործման գդալ՝ երկարությունը 168մմ. աշխատող մասի երկարությունը 60 մմ. լայնությունը 39 մմ. բարձրությունը 14 մմ. բռնակի երկարությունը 108մմ. լայնությունը 11,5մմ. հաստությունը 0,8-ից 0,9մմ՝ . / 3% թույլատրելի շեղումով

3 հատ սնձեռոցիկ:

Հավաքածուն ստվարաթղթե արկղով, հերմետիկ պոլիէթիլենային թաղանթով, բռնակով. արկղերի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով, պոլիէթիլենային փաթեթավորման: Հավաքածուների փաթեթավորված ընդհանուր արկղի մեջ [illegible] փաթեթով.պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից [illegible] պակաս 24 ամիս

Յուրաքանչյուր համազորային չոր օրապահիկի փաթեթավորման արկղերի վրա մակնանշված լինի՝

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը
6. Ապրանքի քանակը հատով
7. «Չինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ»» գրառումը
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
9. Ստվարաթղթե ամուր արկղերով, ինգաշերտ ծալքավոր:
10. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
11. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
12. Արտադրող ձեռնարկության կողմից պարտադիր նշված լինի պահպանման և արտադրման ժամկետների վերաբերյալ գրառումները:
13. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակները արգելվում են.

* Յուրաքանչյուր հավաքածուի տուփի առջևի մասը տպագրված լինի համաձայն կից ներկայացվող հավելված 1 ի, իսկ ետնամասը համաձայն հավելված 2 ի:

Հավելված 1

ՀԱՄԱԶՈՐԱՅԻՆ ՉՈՐ ՕՐԱՊԱՀԻԿ /ՌԱՑԻՈՆ № 1/	Տառերի չափը 26 չափսի

ՀԱՅԱՍՏԱՆ

ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

ԱՐՏԱԴՐՎԱԾ Է _____ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ Արտադրության օրը _____ Պահպանման ժամկետը _____ Հավաքածուի բրուտտո քաշը՝ _____ գրամ +/- 2% ՝Պահպանման ժամկետը՝ 2 տարի	Տառերի չափը 18 չափսի
[illegible]	Տառերի չափը 23 չափսի

Հ ավելված 2

Հ/հ	Հավաքածոյի պարունակությունը	Չ/մ	Մեկ զինծառայողին մեկ օրում հասանելիքը			
			Ընդամենը	Այդ թվում		
				Նախաճաշ	Ճաշ	Ընթրիք
1	Չոր թխվածքաբլիթ (գալետ)	գրամ	200	50	100	50
2	Մսի պահածո	գրամ	300		300	-
3	Մսաբուսական պահածո հնդկածավարով շիլա մսով	գրամ	250	250		-
4	Մսաբուսական պահածո կանաչ ոլոռով խոզի մսով	գրամ	250			250
5	Շաքարավազ	գրամ	90	30	30	30
6	Թեյ	գրամ	3	1.5	-	1.5
7	Մև պղպեղ	գրամ	1		-	-
8	Կերակրի աղ	գրամ	5			-
9	Չոր սպիրտ	հատ	3		-	-
10	Անձեռոցիկ	հատ	3	1	1	1
11	Գդալ	հատ	3	1	1	1

2 դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//

Հավաքածոյի պարունակությունը՝

- չոր թխվածքաբլիթ (գալետ)՝ յուրաքանչյուր հավաքածոյի մեջ 4 հատ 50 գր-ոց պոլիէթիլենային հերմետիկ փաթեթավորմամբ. յուրաքանչյուր փաթեթի վրա <<Չոր թխվածքաբլիթ (գալետ) բանակային, 50 գր. Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով.

- Մսի պահածո 1-ին տեսակի (կտորներով)՝ պատրաստված 1 անգամից ոչ ավել սառեցված ԽԵԿ (կով, երինջ, գոմեշ) մսով և կենդանական ճարպով (բացառությամբ կենդանու փորի ճարպի), ճարպի և շարակցական հյուսվածքների պարունակությունը 14%-ից ոչ ավել, առանց խոշոր արյունատար անոթների և լիմֆատիկ հանգույցների: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավել 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%, պատրաստի մսի ընդհանուր քանակը ոչ պակաս 134 գրամ, մսի մեկ կտորի զանգվածը ոչ պակաս 30 գրամից, թույլատրվում է 30 գրամից պակաս կտորների քանակը ոչ ավել 15% մսի ընդհանուր քանակից: Արգելվում է սննդային հավելման օգտագործումը: 300գր-ոց մետաղյա տուփերով: Պիտակի վրա պետք է նշված լինի սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ ցուցանիշները (ճարպ, սպիտակուց, կալորիականություն): Մատակարարի կողմից յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է ներկայացվի մսի տեսակը հիմնավորող փաստաթուղթ: Տուփերի պիտակների ֆոնը՝ զինվորական դաշտային համազգեստի երանգով: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 36 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

- մսաբուսական պահածո տարբեր՝ յուրաքանչյուր հավաքածոյի մեջ 2 հատ 250 գր-ոց թիթեղյա փաթեթավորմամբ տուփերով. որից մեկը հնդկածավարով շիլա հատիկավոր՝ մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված), տեխնիկական պայմանների համաձայն. պատրաստված 1 անգամից ոչ ավել սառեցված ԽԵԿ (կով, երինջ, գոմեշ) մսի կտրատված մսից (արգելվում է աղացած մսի օգտագործումը). ճարպի և շարակցական հյուսվածքների պարունակությունը 14%-ից ոչ ավել, առանց խոշոր արյունատար անոթների և լիմֆատիկ հանգույցների, պատրաստված արևածաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: Չոր նյութերը ոչ պակաս 40%, ընդհանուր սպիտակուցները 10%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 6%-ից ոչ պակաս. պատրաստի մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 47 գրամ. պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15%-ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ, յուղի զանգվածային մասը 10%-ից 12%, քլորիդների զանգվածային մասը 1.2-ից 1,5%, մսի քանակը համաձայն ԳՈՍՏ 8286-90-ի: Երկրորդ տեսակը՝ կանաչ ոլոռով հատիկավոր՝ 2-րդ կարգի խոզի մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված) և տոմատի սոուսով, տեխնիկական պայմանների համաձայն. պատրաստված 1 անգամից ոչ ավել սառեցված խոզի մանր կտրատված մսից (արգելվում է աղացած մսի օգտագործումը), պատրաստված արևածաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: Չոր նյութերը ոչ պակաս 32%, ընդհանուր սպիտակուցները 5,5%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 4,5%-ից ոչ պակաս. մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 47 գրամ, պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15%-ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ, յուղի զանգվածային մասը 8%-ից 10%, քլորիդների զանգվածային մասը 1.2-ից 1,5%, մսի քանակը համաձայն ԳՈՍՏ 8286-90-ի:

Մատակարարի կողմից յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է ներկայացվի մսի տեսակը հիմնավորող փաստաթուղթ: Պահպանման ժամկետը ոչ պակաս քան 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով: Պիտակի վրա պետք է լինի <<Օգտագործելուց առաջ տաքացնել>>, բաղադրությունը՝ միս, ծավարեղեն, յուղ (նշելով ծավարեղենի և յուղի տեսակը), աղ, սոխ, գազար, տոմատ, պղպեղ, նաև նշելով ցուցանիշներ սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ (յուղ, սպիտակուց, կալորիականություն): Յուրաքանչյուր արկղի մեջ 1 բացիչ:

- շաքարավազ՝ ԳՕՍՏ 21-94, յուրաքանչյուր հավաքածոյի մեջ 3 հատ 30 գր-ոց անհատական փաթեթավորված սննդային պոլիմերային թաղանթով. յուրաքանչյուր փաթեթի վրա <<Շաքարավազ, 30գրամ. Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով. փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով.

- թեյ՝ 1 ին տեսակի. ԳՕՍՏ 1937-90 յուրաքանչյուր հավաքածոյի մեջ 2 հատ 1,5 գր. տարողությամբ՝ մեկանգամյա օգտագործման. մեկանգամյա օգտագործման թույլ փաթեթավորված սննդային պոլիմերային թաղանթով. պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս. պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%.

լուծվող սուրճ՝ ԳՕՍՏ 51881-2002, 2գր տարողությամբ, անհատական փաթեթավորված սննդային պոլիպրոպիլենային թաղանթով, յուրաքանչյուր փաթեթի վրա <<Լուծվող սուրճ, 2 գրամ, Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով, փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%,

թարմացնող ըմպելիք՝ տեխնիկական պայմանների համաձայն, չոր հավելանյութով (նարնջի համով), 30 գրամ տարողությամբ սննդային թղթյա անհատական փաթեթավորմամբ, յուրաքանչյուր փաթեթի վրա մակնանշված լինի բաղադրությունը, պատրաստման եղանակը, <<Թարմացնող ըմպելիք, 30 գրամ, Զինվորի բաժին>, փաթեթավորման օրվա նշումով, սննդային արժեքը 100 գրամում, պահպանման պայմանների ջերմաստիճանը 0-ից մինչև 20°C, փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%,

սև աղացած պղպեղ՝ ԳՕՍՏ 29050-91, 1 գր տարողությամբ սննդային թղթյա անհատական փաթեթավորման, յուրաքանչյուր փաթեթի վրա <<Սև պղպեղ, 1 գրամ, Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով, փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%,

կերակրի աղ՝ ՀՍՏ 239-2005, 5 գր տարողությամբ սննդային թղթյա անհատական փաթեթավորման, յուրաքանչյուր փաթեթի վրա <<Կերակրի աղ, 5 գրամ, Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով, փաթեթի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով: Պահպանման ժամկետը ոչ պակաս քան 24 ամիս,

պովիդոն՝ տարբեր մրգերի 1 ին տեսակի ՀՍՏ 48-07, յուրաքանչյուր հավաքածուի մեջ 1 հատ 45 գր-ոց անհատական փաթեթավորմամբ, յուրաքանչյուր փաթեթի վրա <<Ջեմ, 45 գրամ, Զինվորի բաժին>> և փաթեթավորման օրվա նշումով, պահպանման ժամկետը ոչ պակաս քան 24 ամիս, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80%,

լուցկի՝ ջրա և քամիադիմացկուն, մեկ տուփի մեջ 6 հատիկ և 1 այրող մակերես, հերմետիկ ջրակայուն փաթեթավորմամբ,

չոր սպիրտ՝ մեկ ստվարաթղթե տուփի մեջ 3 հատիկ, պոլիէթիլենային փաթեթավորման, 3 հատ մեկանգամյա օգտագործման գդալ՝ երկարությունը 168մմ, աշխատող մասի երկարությունը 60 մմ, լայնությունը 39 մմ, բարձրությունը 14 մմ, բռնակի երկարությունը 108մմ, լայնությունը 11,5մմ, հաստությունը 0,8-ից 11,9մմ՝ +/- 3% թույլատրելի շեղումով

- 3 հատ անձեռոցիկ:

Հավաքածուն ստվարաթղթե արկղով, հերմետիկ պոլիէթիլենային թաղանթով, բռնակով, արկղերի ֆոնը՝ դաշտային համազգեստի երանգով, պոլիէթիլենային փաթեթավորման: Հավաքածուները փաթեթավորված ընդհանուր արկղի մեջ 10 փաթեթով, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս:

Նանոթություն՝

- **Յուրաքանչյուր համազորային չոր օրապահիկի փաթեթավորման արկղերի վրա պիտակավորված լինի՝**

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը
6. Ապրանքի քանակը հատով
7. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
9. Ստվարաթղթե ամուր արկղերով, հնգաշերտ ծալքավոր:
10. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
11. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
12. Արտադրող ձեռնարկության կողմից պարտադիր նշված լինի պահպանման և արտադրման ժամկետների վերաբերյալ գրառումները:
13. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակները արգելվում են:

Յուրաքանչյուր հավաքածուի տուփի առջևի մասը տպագրված լինի համաձայն կից ներկայացվող հավելված 1-ի, իսկ ետնամասը համաձայն հավելված 2-ի:

Հավելված 1

ՀԱՏՈՒԿ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉՈՐ ՕՐԱՊԱՀԻԿ /ՌԱՑԻՈՆ № 2/	Տառերի չափը 26 չափսի

ՀԱՅԱՍՏԱՆ

ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

ԱՐՏԱԴՐՎԱԾ Է _____ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ Արտադրության օրը _____ Պահպանման ժամկետը _____ Հավաքածուի բրուտտա քաշը՝ _____ գրամ +/- 2% ՝Պահպանման ժամկետը՝ 2 տարի	Տառերի չափսը 18 չափսի
«ՍՈՒՆՎՈՐԻ ԲԱԺԻՆ» ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ	Տառերի չափսը 23 չափսի

Հավելված 2

Հ/հ	Հավաքածուի պարունակությունը	Չ/մ	Մեկ գինծառայողին մեկ օրում հասանելիքը			
			Ընդամենը	Այդ թվում		
				Նախաճաշ	Ճաշ	Ընթրիք
1	Հոր թխվածքաբլիթ (գաղետ)	գրամ	200	50	100	50
2	Մսի պահածո	գրամ	300		300	-
3	Մսաբուսական պահածո ենդկածավարով շիլա մսով	գրամ	250	250	-	-
4	Մսաբուսական պահածո կանաչ ոլոռով խոզի մսով	գրամ	250		-	250
5	Շաքարավազ	գրամ	90	30	30	30
6	Թեյ	գրամ	3	1.5	-	1.5
7	Լուծվող սուրճ	գրամ	2		2	-
8	Թարմացնող ըմպելիք	գրամ	30		30	-
9	Սև պղպեղ	գրամ	1		-	-
10	Կերակրի աղ	գրամ	5			-
11	Պուլիոն	գրամ	45		-	45
12	Լուցկի	հատ	6		-	-
13	Հոր սպիրտ	հատ	3		-	-
14	Անձեռոցիկ	հատ	3	1	1	1
15	Դոդոշ	հատ	3	1	1	1

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

տնօրեն

Ա. ՄԻՐՋԱԲԵԿՅԱՆ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրաքյան 23, շին 8
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
հ/հ 19300412398301 00
ՀՎՀՀ 01246075

Ֆ. ԹԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ 7/15-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	հավաքածու	81 000	3 270	264 870 000	Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	հավաքածու	24 000	3 590	86 160 000	
Ընդամենը 351 030 000 (երեք հարյուր հիսունմեկ միլիոն երեսուն հազար) ՀՀ դրամ						

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	
1	Դաշտային օրապարեն /Համազորային չոր օրապահիկ /ռացիոն N 1//	հավաքածու	81 000	3 270	264 870 000	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում
2	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	հավաքածու	24 000	3 590	86 160 000	

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
գնումների կառավարման գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011144079
ՀԾՀՀ 00867415
Պաշտպանության նախարարի տեղակալ-
գնումների դեպարտամենտի պետ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրաքյան 23, շին 8
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 193004123983010O
ՀՎՀՀ 01246073

Ա. ԽՈՒՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀՀՊՁԲ-7/15-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների							
		բանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
_____	_____
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն